ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<20>> հունվարի 2014 թ. N 05

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[2]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N159-Ա հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու 2014 թվականի աշխատանքային ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամասիա, Արգավանդ և Ամբերդ գյուղական համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Հ. Հարությունյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 30 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2014 թվականի հունվարի 22-ի
N 25 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.

Անդամներ՝

Ա. Ղուկասյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ.
Յու. Մանվելյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.
Ա. Աղաջանյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ.
Ս. Չալյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական առաջատար մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**